Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1019[24]-05.03.2025-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ հոդվածի 10-րդ մասում «արժեթղթերը» բառից հետո լրացնել «, կրիպտոակտիվները» բառը:

Հոդված 2. Օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասում «ածանցյալ գործիք» բառերից հետո լրացնել «կամ կրիպտոակտիվ» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 269-րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 269. Արժեթղթերի կամ կրիպտոակտիվների շուկայում գնային չարաշահումը»:

Հոդված 4. Օրենսգրքի 269-րդ հոդվածի 1-ին մասում «գնային չարաշահումը» բառերից հետո լրացնել «կամ «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված՝ կրիպտոակտիվների շուկայում գնային չարաշահումը» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: